

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 26 » հուլիս 2022թ. No 3242 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏ Ց-ՈՎ
ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ «ՍՈՖՈՍԲՈՒՎԻՐ/ՎԵԼՊԱՏԱՍՎԻՐ»
(SOFOSBUVIR/VELPATASVIR) ԴԵՂԵՐՈՎ ԲՈՒԺՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԿԱՐԳԸ, ԲՈՒԺՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿԻ
ՁԵՎԸ, ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏ Ց-ՈՎ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՎԱՐՈՒՄԸ,
ԴԵՂԱՏՈՄՍԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ
ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲՈՒԺՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ
ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի N
3064 -Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն որոշման հավելված 2-ի 15-րդ կետը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշման հավելվածով հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետությունում վիրուսային հեպատիտ Ց-ով պացիենտների «Սոֆոսբուվիր/Վելպատասվիր» (Sofosbuvir/Velpatasvir) դեղերով բուժման կազմակերպման կարգը՝ համաձայն Հավելված 1-ի,

2) Ուղղակի ազդող հակավիրուսային դեղերով՝ «Սոֆոսբուվիր/Վելպատասվիր» (Sofosbuvir/Velpatasvir) վիրուսային հեպատիտ Ց-ի բուժման վերաբերյալ տեղեկատվական թերթիկի Ձևը՝ համաձայն Հավելված 2-ի,

3) Հայաստանի Հանրապետությունում վիրուսային հեպատիտ Ց-ով պացիենտների վարումը, դեղատոմսի տրամադրումը և հսկողությունն իրականացնող բժշկական կազմակերպությունների ցանկը՝ համաձայն Հավելված 3-ի,

4) Վիրուսային հեպատիտ Ց-ով պացիենտների հաշվառման գրանցամատյանի ձևը՝ համաձայն Հավելված 4-ի,

5) Վիրուսային հեպատիտ Ց-ով պացիենտների ուղղակի ազդող «Սոֆոսբուվիր/Վելպատասվիր» (Sofosbuvir/Velpatasvir) բուժման արդյունքի գրանցամատյանի ձևը՝ համաձայն Հավելված 5-ի:

2. Առաջարկել վիրուսային հեպատիտ Ց-ով պացիենտների վարումը, դեղատոմսի տրամադրումը և հսկողությունն իրականացնող բժշկական կազմակերպությունների ղեկավարներին՝

1) սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո վիրուսային հեպատիտ Ց-ով պացիենտների բուժումը կազմակերպել համաձայն սույն հրամանի Հավելված 1-ով հաստատված կարգի,

2) տասնօրյա ժամկետում հավաքագրել հեպատիտ Ց-ով պացիենտների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը՝ համաձայն սույն հրամանի Հավելված 4-ով հաստատված գրանցամատյանի ձևի և ուղարկել ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (տեղակայման հասցե՝ Աճառյան փողոց, շենք 2) էլեկտրոնային հասցեին՝ HCVncid@gmail.com:

3. ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ տնօրենին՝ **(3-րդ կետը խմբագրվել է ԱՆ 08.12.23թ. թիվ 5928-Լ հրամանով)**

1) նշանակել պատասխանատու՝ սույն հրամանի Հավելված 3-ով հաստատված բժշկական կազմակերպություններից Հավելված 4-ով և Հավելված 5-ով հաստատված գրանցամատյանի ձևով ներկայացված տեղեկատվության հավաքագրման, նույն գրանցամատյանի ձևում մուտքագրման և ամփոփման նպատակով:

4. Ուժը կորցրած ճանաչել Առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 12-ի «Հայաստանի Հանրապետությունում վիրուսային հեպատիտ Ց-ով պացիենտների «Սոֆոսբուվիր/Դակլատասվիր» (Sofosbuvir/Daclatasvir) դեղերով բուժման կազմակերպման կարգը, բուժման վերաբերյալ տեղեկատվական թերթիկի Ձևը, վիրուսային հեպատիտ Ց-ով պացիենտների վարումը, դեղատոմսի տրամադրումը և հսկողությունն իրականացնող բժշկական կազմակերպությունների

ցանկը, պացիենտների հաշվառման, ինչպես նաև բուժման արդյունքի գրանցամատյանների ձևերը հաստատելու և Առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 7-ի N 3049-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ» N 3064-Լ հրամանը:

5. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝ ապահովել.

1) սույն հրամանի տեղադրումը Առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրից:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանին:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

(Հավելված 1-ը խմբագրվել է ԱՆ 01.03.2023թ. թիվ 973-Լ հրամանով)

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏ Ց-ՈՎ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ «ՍՈՖՈՍԲՈՒՎԻՐ/ՎԵԼՊԱՏԱՍՎԻՐ» (SOFOSBUVIR/VELPATASVIR) ԴԵՂԵՐՈՎ ԲՈՒԺՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում վիրուսային հեպատիտ Ց-ով պացիենտներին անվճար տրամադրվող ուղղակի ազդող հակավիրուսային (այսուհետ՝ ՈՒԱՀ) դեղերով՝ «Սոֆոսբուվիր/Վելպատասավիր» (Sofosbuvir/Velpatasvir) բուժման կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի շրջանակներում վիրուսային հեպատիտ Ց-ով պացիենտների վարումը, դեղատոմսի տրամադրումը և հսկողությունն իրականացվում է սույն հրամանի Հավելված 3-ում ընդգրկված բժշկական կազմակերպություններում՝ ինֆեկցիոն հիվանդությունների և/կամ աղեստամոքսաբանության մասնագիտացում ունեցող համապատասխան բժիշկ-մասնագետի կողմից:

3. Հեպատիտ Ց-ով պացիենտների ՈՒԱՀ դեղերով՝ «Սոֆոսբուվիր/Վելպատասավիր» (Sofosbuvir/Velpatasvir) բուժումն իրականացվում է հետևյալ պարտադիր լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների արդյունքների հիման վրա՝

- 1) հեպատիտ Ց վիրուսի հայտնաբերում (դրական) որակական պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) մեթոդով,
- 2) ֆիբրոզի աստիճանի որոշում՝ լյարդի էլաստոգրաֆիա (ֆիբրոսկան) և/կամ APRI և/կամ FIB-4, ընդ որում, 3-րդ և 4-րդ աստիճանի ֆիբրոզի դեպքում որոշվում է նաև AFP,
- 3) արյան ընդհանուր հետազոտություն լեյկոբանաձևով, կենսաքիմիական հետազոտություն (բիլիռուբին ընդհանուր/կապված, ԱԼՏ, ԱՍՏ, ալբումին, գլյուկոզ, կրեատինին, պրոտրոմբինային ժամանակ/ինդեքս/INR),

4) HBsAg և/կամ հակա-HBc ու հակա-HIV (հակամարմիններ ՄԻԱՎ-ի նկատմամբ),

5) որովայնի խոռոչի օրգանների ուլտրաձայնային հետազոտություն:

4. (4-րդ կետը ուժը կորցրած է ճանաչվել ԱՆ 08.12.23թ. թիվ 5928-Լ հրամանով)

5. (5-րդ կետը ուժը կորցրած է ճանաչվել ԱՆ 08.12.23թ. թիվ 5928-Լ հրամանով)

6. Սույն հրամանի Հավելված 3-ում ընդգրկված բժշկական կազմակերպությունների ինֆեկցիոն հիվանդությունների և/կամ աղեստամոքսաբանության մասնագիտացում ունեցող համապատասխան բժիշկ-մասնագետները յուրաքանչյուր շահառուի վերաբերյալ սույն հրամանի Հավելված 4-ով հաստատված գրանցամատյանի ձևով անհրաժեշտ տեղեկատվությունը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկում են ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ում նշանակված պատասխանատուին:

7. Պատասխանատուն հավաքագրում է ներկայացված տեղեկատվությունը, մուտքագրում սույն հրամանի Հավելված 4-ով հաստատված գրանցամատյանի ձևում:

8. Հեպատիտ Ց-ով պացիենտի ՈՒԱՀ դեղերով բուժման սույն կարգին համապատասխանության դրական եզրակացության դեպքում բժիշկ-մասնագետի կողմից սահմանված կարգով լրացվում է դեղատոմս:

9. Հեպատիտ Ց-ով պացիենտը բժիշկ-մասնագետի կողմից սահմանված կարգով լրացված դեղատոմսով դիմում է ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ՝ ՈՒԱՀ դեղերը ստանալու նպատակով:

10. ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ում հեպատիտ Ց-ով պացիենտին դեղատոմսի հիման վրա ՈՒԱՀ դեղերը տրամադրում է յուրաքանչյուր ամսվա կտրվածքով՝ 1 տուփ:

11. Սույն կարգի շրջանակներում հեպատիտ Ց-ով պացիենտների բուժումը և դեղերի համակցությունն իրականացվում է համապատասխան բժշկի կողմից, հիմք ընդունելով՝

- 1) պացիենտի օբյեկտիվ քննության և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների արդյունքները,
- 2) ուղեկցող հիվանդությունները,
- 3) նախկինում ստացած հակավիրուսային բուժումը:

12. Սույն կարգի շրջանակներում հեպատիտ Ց-ով պացիենտների բուժումն իրականացվում է ՌԻԱՀ դեղերի միջոցով, մասնավորապես՝ «Սոֆոսբուվիր/Վելպատասավիր» (Sofosbuvir400mg/Velpatasvir100mg) համակցությամբ, օրը 1 անգամ՝ 12 կամ 24 շաբաթ տևողությամբ, հաշվի առնելով սույն կարգի 13-րդ կետի դրույթները:

13. Սույն կարգի շրջանակներում բժշկական օգնությունը և սպասարկումը տրամադրվում է.

- 1) 12 տարեկանից բարձր հեպատիտ Ց ախտորոշմամբ պացիենտներին, (որակական ՊՇՌ մեթոդով «Ց» վիրուսի փաստացի պատասխան),
- 2) լյարդի ֆիբրոզ 0 – 4 (այդ թվում՝ լյարդի ցիռոզի Child-Pugh A դաս, MELD <20) ունեցող պացիենտներին՝ 12 շաբաթ տևողությամբ,
- 3) լյարդի ցիռոզ (Child-Pugh B կամ C դաս, MELD<20) ունեցող պացիենտներին՝ 24 շաբաթ տևողությամբ:

14. Սույն կարգով սահմանված հակավիրուսային դեղերը չեն տրամադրվում, եթե պացիենտի մոտ առկա է.

- 1) դեկոմպենսացված լյարդի ցիռոզ (Child-Pugh B կամ C՝ MELD \geq 20),
- 2) հեպատոցեյուլյար կարցինոմա,
- 3) HBV-համավարակ HBsAg դրական, սակայն HBV-համավարակի դեպքում «Սոֆոսբուվիր/Վելպատասավիր»-ով բուժումը հնարավոր է իրականացնել HBV-ի տենոֆովիրով հակավիրուսային բուժման մեկնարկից հետո,
4) քրոնիկ երիկամային հիվանդություն (eGFR<30),
- 4) հղիություն և կրծքով կերակրում,
- 5) նախկինում HCVNS5A ընկճողներով հակավիրուսային բուժում ստացած պացիենտներին:

15. «Սոֆոսբուվիր/Վելպատասավիր» դեղերը տրամադրվում են շահառուներին՝ հաշվի առնելով սույն կարգի 3-րդ, 13-րդ և 14-րդ կետերը:

16. «Սոֆոսբուվիր/Վելպատասավիր» (Sofosbuvir/Velpatasvir) դեղերով բուժման ընդհատման վերաբերյալ տեղեկությունը, յուրաքանչյուր ամսվա վերջին օրը, անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (տեղակայման հասցե՝ Աճառյան փողոց, շենք 2) էլեկտրոնային

հասցեին՝ HCVncid@gmail.com՝ համաձայն սույն հրամանի Հավելված 5-ով հաստատված Ձևի:

17. Սույն կարգի 12-րդ կետով նշված դեղերի օգտագործման դեպքում կարող են դիտվել դեղերի փոխազդեցություններ (EASL Recommendations on Treatment of Hepatitis C 2018, WHO Hepatitis C guidelines 2018, Liverpool Hep-drugInteraction.com):

18. Սույն կարգի շրջանակներում տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման շահառուները գրավոր համաձայնություն են տալիս սույն կարգի 19-րդ կետով սահմանված մշտադիտարկման և 20-րդ կետով սահմանված բուժման արդյունավետությունը գնահատելու համար նախատեսված հետազոտությունները իրականացնելու վերաբերյալ՝ համաձայն սույն հրամանի Հավելված 2-ով հաստատված Ձևի:

19. Սույն կարգի շրջանակներում տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման շահառուների բուժման վերահսկման և մշտադիտարկման նպատակով պարտադիր լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններն են՝

1) բուժման 4-րդ շաբաթվա վերջում արյան ընդհանուր հետազոտություն լեյկոբանաձևով և կենսաքիմիական հետազոտություն,

2) ցիռոզով, երիկամային հիվանդություններով, ուղեկցող հիվանդություններով և համավարակներով պացիենտների դեպքում հնարավոր է ավելի հաճախ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացում:

20. Բուժման արդյունավետությունը գնահատելու նպատակով բուժման ավարտից 12 և/կամ 24 շաբաթ անց իրականացվում է հեպատիտ Ց վիրուսի որակական կամ քանակական ՊՇՌ մեթոդով հետազոտություն: Բացասական արդյունքի դեպքում պացիենտների մոտ արձանագրվում է կայուն վիրուսոլոգիական պատասխան (Sustained Virologic Response, SVR 12, SVR 24), որի վերաբերյալ պարտադիր տեղեկությունը յուրաքանչյուր ամսվա վերջին օրը ներկայացվում է ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (տեղակայման հասցե՝ Աճառյան փողոց, շենք 2) էլեկտրոնային հասցեին՝ HCVncid@gmail.com՝ համաձայն սույն հրամանի Հավելված 5-ով հաստատված Ձևի, ընդ որում՝ 6 ամսվա ընթացքում, կայուն վիրուսոլոգիական պատասխանի վերաբերյալ յուրաքանչյուր

ամսվա ավարտին 3 անգամ և ավելի տեղեկատվություն չներկայացնելու դեպքում, ծրագրի շրջանակներում բժշկի աշխատանքը դադարեցվում է:

21. Կայուն վիրուսոլոգիական պատասխանի դեպքում.

1) ֆիբրոզ՝ 4-րդ և 3-րդ աստիճան ունեցող պացիենտներն անցնում են դիսպանսեր հսկողության՝ յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ իրականացնելով որովայնի խոռոչի օրգանների ուլտրաձայնային հետազոտություն,

2) ֆիբրոզ՝ 0-2-րդ աստիճան ունեցող պացիենտները դուրս են գալիս հսկողությունից:

22. Սույն կարգի շրջանակներում տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման համար հիմք են հանդիսանում հետևյալ փաստաթղթերը՝

1) Անձը հաստատող փաստաթուղթը,

2) սույն կարգի 3-րդ կետով նախատեսված պարտադիր լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների արդյունքները հավաստող փաստաթղթերը:

23. Սույն կարգի շրջանակներում տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման շահառուները.

1) սույն կարգի 22-րդ կետով նախատեսված փաստաթղթերով դիմում են սույն հրամանի Հավելված 3-ում ընդգրկված բժշկական կազմակերպություններ,

2) ստորագրում են սույն հրամանի Հավելված 2-ով հաստատված տեղեկատվական թերթիկի Ձևը:

Հավելված 2
Առողջապահության նախարարի
2022 թվականի հուլիս « 26 » - ի N 3242 - Լ հրամանի

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

ՌԻՂՂԱԿԻ ԱԶԴՈՂ ՀԱԿԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ԴԵՂԵՐՈՎ՝ «ՍՈՖՈՍԲՈՒՎԻՐ/ՎԵԼՊԱՏԱՍՎԻՐ»

Ի՞նչ է հեպատիտ Ց-ն և ի՞նչ ռիսկեր կան վարակի դեպքում
Հեպատիտ Ց-ն վարակային հիվանդություն է, որը գլխավորապես ախտահարում է լյարդը: Քրոնիկ հեպատիտ Ց ունեցող պացիենտների մեծ մասի մոտ չեն լինում ախտանիշներ և հիվանդությունը հայտնաբերվում է բժշկական հետազոտության կամ արյան թեստերի իրականացման արդյունքում: Սակայն քրոնիկական ընթացքը տարիներ անց կարող է հանգեցնել լյարդի ցիռոզի կամ քաղցկեղի:

**(SOFOSBUVIR/VELPATASVIR) ՔՐՈՆԻԿ ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏ Ց-Ի
ԲՈՒԺՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ի՞նչ պետք է իմանալ ուղղակի ազդող հակավիրուսային դեղերով (այսուհետ՝ ՈՒԱՀ) («ՍՈՖՈՍԲՈՒՎԻՐ/ՎԵԼՊԱՏԱՍՎԻՐ») հեպատիտ Ց հիվանդության բուժման մասին

2016 թվականին ԱՀԿ կողմից առաջարկվել են հեպատիտ Ց հիվանդության բուժման նոր սխեմաներ՝ օգտագործելով ՈՒԱՀ դեղեր, որոնցով բուժման տևողությունն ավելի կարճ է, բուժման արդյունավետությունն ավելի բարձր է և կազմում է մոտ 90%:
«ՍՈՖՈՍԲՈՒՎԻՐ/ՎԵԼՊԱՏԱՍՎԻՐ» դեղերը տրամադրվում են Առողջապահության նախարարության կողմից անվճար:

Որո՞նք են ՈՒԱՀ դեղերով հեպատիտ Ց հիվանդության բուժման հնարավոր կողմնակի ազդեցությունները

Նշված դեղերի («Սոֆոսբուվիր/Վելպատասվիր») օգտագործման դեպքում կարող են դիտվել կողմնակի ազդեցություններ՝ հոգնածություն, ընդհանուր թուլություն, սրտխառնոց, անքնություն: Հնարավոր կողմնակի ազդեցությունները պարբերաբար հսկվելու են արյան հետազոտությամբ և ֆիզիկական զննումով: Նշված դեղերի («Սոֆոսբուվիր/Վելպատասվիր») օգտագործման դեպքում կարող են դիտվել դեղորայքային փոխազդեցություններ, ուստի նախքան բուժման մեկնարկը անհրաժեշտ է Ձեր բուժող բժշկին հայտնել ընդունվող այլ դեղերի վերաբերյալ:

Ի՞նչ է անհրաժեշտ դեղորայքային բուժում նշանակելուց առաջ

Նախքան բուժման մեկնարկը, դրա հիմնավորվածությունը որոշելու նպատակով պացիենտները պետք է անցնեն հետևյալ պարտադիր լաբորատոր-գործիքային ավստորոշիչ հետազոտությունները՝

- 1) հեպատիտ Ց վիրուսի հայտնաբերում (դրական) որակական ՊՇՌ մեթոդով
- 2) ֆիբրոզի աստիճանի որոշում՝ յարդի էլաստոգրաֆիա (ֆիբրոսկան) և/կամ ֆիբրոտեստ և/կամ APRI և/կամ FIB-4*
- 3) արյան ընդհանուր հետազոտություն լեյկոբանաձևով, կենսաքիմիական հետազոտություն (բիլիռուբին ընդհանուր/կապված, ԱԼՏ, ԱՍՏ, ալբումին, գլյուկոզ, կրեատինին, պրոտրոմբինային ժամանակ/ինդեքս/INR)
- 4) HBsAg և/կամ հակա-HBc ու հակա-HIV (հակամարմիններ ՄԻԱՎ-ի նկատմամբ) **(կեղք խմբագրվել է ԱՆ 01.03.2023թ. թիվ 973-Լ հրամանով)**
- 5) որովայնի խոռոչի օրգանների ուլտրաձայնային հետազոտություն

* 3-րդ և 4-րդ աստիճանի ֆիբրոզի դեպքում որոշվում է AFP:

Որքա՞ն է «ՍՈՖՈՍԲՈՒՎԻՐ/ՎԵԼՊԱՏԱՍՎԻՐ» դեղերով հեպատիտ Ց բուժման տևողությունը

Ձեր բուժումը տևելու է 12 շաբաթ կամ 24 շաբաթ՝ կախված հիվանդության փուլից **(կեղք լրացվել է ԱՆ 01.03.2023թ. թիվ 973-Լ հրամանով)**

Որո՞նք են մշտադիտարկման համար անհրաժեշտ հետազոտությունները

Բուժման վերահսկման և մշտադիտարկման նպատակով պարտադիր լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ՝

- 1) բուժման 4-րդ շաբաթվա վերջում արյան ընդհանուր հետազոտություն լեյկոբանաձևով և կենսաքիմիական հետազոտություն,
- 2) ցիռոզով, երիկամային հիվանդություններով, ուղեկցող հիվանդություններով և համավարակներով պացիենտների դեպքում հնարավոր է ավելի հաճախ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացում:

Ինչպե՞ս է որոշվում հեպատիտ Յ-ի ՌԻԱՀ դեղերով բուժման արդյունավետությունը

Հեպատիտ Յ հիվանդության բուժման հիմնական նպատակը վիրուսի իսպառ վերացումն է: Բուժման արդյունավետությունը գնահատելու նպատակով բուժման ավարտից 12 կամ 24 շաբաթ անց անհրաժեշտ է հեպատիտ Յ վիրուսի որակական կամ քանակական ՊՇՌ մեթոդով իրականացում՝ բացասական արդյունքի դեպքում պացիենտների մոտ արձանագրվում է կայուն վիրուսաբանական պատասխան (Sustained Virologic Response, SVR 12, SVR 24):

Ինչպե՞ս է իրականացվում կայուն վիրուսաբանական պատասխանի դեպքում հետագա մշտադիտարկումը

- 1) Ֆիբրոզ՝ 4-րդ և 3-րդ աստիճանի, ունեցող պացիենտները անցնում են դիսպանսեր հսկողության՝ յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ անհրաժեշտ է իրականացնել որովայնի խոռոչի օրգանների ուլտրաձայնային հետազոտություն,
- 2) Ֆիբրոզ՝ 0-2-րդ աստիճանի, ունեցող պացիենտները դուրս են գալիս հսկողությունից:

Բուժման ընթացքում շատ կարևոր է, որ Դուք, ըստ բժշկի ցուցման, պարբերաբար ներկայանաք հետազոտությունների: Կողմնակի ազդեցությունների դեպքում կամ անհրաժեշտ կանոններին չհետևելու դեպքում, որը կարող է ուղղակի սպառնալիք հանդիսանալ Ձեր բուժման և կյանքի համար, բժիշկ մասնագետը իրավունք ունի Ձեր բուժումը դադարեցնելու որոշում ընդունել:

ԵՍ՝ _____

_____ս, սույնով հաստատում եմ, որ կարդացել եմ վերոնշյալ տեղեկատվությունը կամ այն ինձ համար կարդացել են: Ես ունեցել եմ հնարավորություն տալու իմ հարցերը դրա վերաբերյալ: Ես տեղյակ եմ իմ հիվանդության և ինձ առաջարկվող բուժման մասին, հասկացել եմ հեպատիտ Յ հիվանդության բուժման նպատակը և համաձայն եմ ստանալ բուժում: Ես հաստատում եմ, որ բուժման ընթացքում պարբերաբար ներկայանալու եմ և իրականացնելու եմ սույն տեղեկատվական թերթիկում նշված պարտադիր հետազոտությունները:

Պացիենտ՝ _____

(ստորագրություն, անուն, ազգանուն, հեռախոսահամար)
Օր, ամիս, տարեթիվ՝ _____ 202 թ.

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏ Ց-ՈՎ
ՊԱՅԻԵՆՏՆԵՐԻ ՎԱՐՈՒՄԸ, ԴԵՂԱՏՈՄՍԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ
ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն
2. «Միքայելյան» համալսարանական հիվանդանոց (համաձայնությամբ)
3. «Աստղիկ» բժշկական կենտրոն (համաձայնությամբ)
4. «Էրեբունի» բժշկական կենտրոն (համաձայնությամբ)
5. «Նաիրի» բժշկական կենտրոն (համաձայնությամբ)
6. «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոն (համաձայնությամբ)
7. «Էլիտ-Մեդ» բժշկական կենտրոն (համաձայնությամբ)
8. «Վիոլետա» բժշկական կենտրոն (համաձայնությամբ)
9. «Երևան» բժշկագիտական կենտրոն փակ բաժնետիրական ընկերություն
(համաձայնությամբ)

(9-րդ կետը խմբագրվել է ԱՆ 19.02.24թ. թիվ 924-Լ հրամանով)

10. «Կանարդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
(Դավիդյանց պոլիկլինիկաներ) (համաձայնությամբ)

(10-րդ կետը լրացվել է ԱՆ 08.12.23թ. թիվ 5928-Լ հրամանով)

11. «Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոն (համաձայնությամբ)

(11-րդ կետը լրացվել է ԱՆ 02.02.24թ. թիվ 602-Լ հրամանով)